ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան
№16հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝

---------- Ա. Դալլաքյան

Կ. Տ.

«30» օգոստոսի 2023թ.

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Դ.Վարուժանի անվան №16 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Առարկայական մեթոդական միավորման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄՄ նախագահ՝ /Ն. Պետրոսյան/

2023 – 2024 ՈՒՍՏԱՐԻ

Վանաձորի Դ.Վարուժանի անվան №16 հիմնական դպրոցի
Բնագիտական ՄՄ
2023-2024 ուստարվա
գործունեության հիմնական ուղղությունները.

- Քննարկել առարկայական ծրագրերը, չափորոշիչները, մեթոդական ձեռնարկները, դասագրքերը և դրանցում կատարված փոփոխությունները:
- Քննարկել և հաստատման ներկայացնել ուսուցիչների տարեկան թեմատիկ պլանները, դրանցում ընդգրկված թեմաների համապատասխանությունը առարկայի չափորոշչային պահանջներին և օրացույցային ժամաքանակին:
- Նպաստել տարրական կրթությունից հիմնականին սահուն անցմանը:
- Նպաստել սովորողների կարողունակությունների զարգացմանը կրթական նոր պահանջներին համապատասխան:
- ՏՀՏ-ների կիրառումը դարձնել կրթության որակի բարձրացման ուղի:
- Ապահովել ուսուցման որակ կրթական նոր չափորոշիչների ներդրմամբ:
- Կատարել կրթական և մեթոդական աշխատանքների արդյունքների վերլուծություն:
- Կազմակերպել մեթոդամանկավարժական ընթերցումներ:
- Իրականացնել ՄՄ կողմից ներդպրոցական վերահսկողություն և մշտադիտարկում:
- Իրականացնել մանկավարժական կադրերի որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներ:
- Օժանդակել տնօրենությանը դպրոցական օլիմպիադաներ, մրցույթներ և այլ միջոցառումներ կազմակերպելիս:
- Օժանդակել տնօրենությանը դպրոցում որակի ստուգումներ կազմակերպելիս:

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ - ԾՐԱԳԻՐ

№	Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող
1.	Հրավիրել մեթոդական միավորման ամենամսյա նիստեր (անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ): Նախապես պլանավորել օրակարգերը և արձանագրել գրանցամատյանում:	ամիսը մեկ անգամ	մասնախմբի ղեկավար
2.	Հետևողականորեն տեղեկանալ և մասնախմբի անդամներին հաղորդակից դարձնել ՀՀ ԿԳՄՄՆ հրապարակած բոլոր որոշումներին, բնագիտական առարկաների դասավանդմանն ուղղված բոլոր հնարավոր փոփոխություններին: Ժամանակին ծանոթանալ, քննարկել և արձագանքել ստացված բոլոր գրություններին, կատարել անձնարարականները: Հետագա աշխատանքները հարմարեցնել դրանց:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
3.	Քննարկել և հաստատման ներկայացնել բնագիտական առարկայական մեթոդական միավորման աշխատանքային տարեկան պլանը, որի դրույթները բխում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից և համապատասխանում են ՄՄ կանոնադրությանը: Նրանում ընդգրկել նախորդ ուստարվա բացթողումները: Ուստարվա աշխատանքները կազմակերպել ըստ այդ պլանի:	օգոստոս	մասնախմբի անդամներ, տնօրեն
4.	Քննարկել առարկայական ուսումնական ծրագրերը, չափորոշիչները, մեթոդական ձեռնարկները, դասագրքերը և դրանցում կատարված փոփոխությունները:	օգոստոս	մասնախմբի անդամներ
5.	Դպրոցի տնօրենին առաջարկություն ներկայացնել 2023-2024 ուստարվա դասաբաշխման, ուսպլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՄՆ ցուցումները, առարկայական ծրագրային նյութերի ծանրաբեռնվածությունը, մասնախմբի դիտարկումները և դպրոցի նախասիրությունները:	օգոստոս	մասնախմբի ղեկավար
6.	Ներկայացնել ուսուցչի պաշտոնային պարտականությունները, ուսուցչի կամավոր ատեստավորման կարգը, մասնակցության գրանցման ժամկետները, որակավորման տարակարգի բնութագրիչներն ու դրանց շնորհման չափանիշները՝ մղելով նրանց որակավորման բարձրացման, տարակարգի ձեռքբերման և կամավոր ատեստավորման մասնակցության:	սեպտեմբեր	մասնախմբի ղեկ. ՈՒԱԳ տեղակալ
7.	Ուսուցիչներին ներկայացնել էլեկտրոնային մատյանների լրացումները կատարելու կարգը: Օժանդակել սկսնակ ուսուցիչներին այդ գործում:	սեպտեմբեր	մասնախմբի ղեկ. ՈՒԱԳ տեղակալ

8.	Քննարկել Նոր ՀՊՉ-ի հիմնական դրույթները: Քննարկել հանրակրթական դպրոցում կիրառվող նոր չափորոշիչներով նախատեսվող գնահատման տեսակները, դրանց կիրառման նպատակահարմարությունն ու առանձնահատկությունները բնագիտական առարկաներից: Տարանջատել գիտելիքների և կարողությունների տիրապետման տարբեր մակարդակներն ըստ առարկայական չափորոշիչների:	օգոստոս	մասնախմբի անդամներ
9.	Առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՄՆ գնահատման մեթոդաբանությամբ ու ցուցումներով, քննարկել և մանկխորհրդի հաստատմանը ներկայացնել առաջարկություն տարբեր տեսակի աշխատանքների նվազագույն քանակի վերաբերյալ: Թեմատիկ պլանները կազմելիս հիմք ընդունել դրանց վերաբերյալ մանկավարժական խորհրդի կողմից հաստատված որոշումը և ուսումնական տարվա ընթացքում առաջնորդվել դրանով:	օգոստոս	մասնախմբի անդամներ
10.	Քննարկել թեմատիկ պլանների կազմման վերաբերյալ ԿՁՆԱԿ ՀՀ ԿԳՄՄՆ, ուղեցույցներում և ուսուցիչների վերջին վերապատրաստումների ընթացքում ներկայացված բոլոր ցուցումները, ուղղորդել ուսուցիչներին թեմատիկ պլաններում առանձնացնել տվյալ թեմայի դասավանդման նպատակները և ակնկալվող վերջնարդյունքները, որոնք բխում են պետական առարկայական չափորոշչային պահանջներից:	օգոստոս	մասնախմբի անդամներ
11.	Քննարկել ուսուցիչների բնագիտական առարկաներից տարեկան թեմատիկ պլանների նախագծերը, ստուգել դրանցում պետական առարկայական չափորոշիչների համապատասխանությունը, թեմաների նպատակահարմար բաշխվածությունը ուսումնական ծրագրերի, օրացույցային աշխատանքային ժամաքանակի հետ: Ներկայացնել դրանք տնօրենի հաստատմանը:	օգոստոս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
12.	Քննարկել և հաստատման ներկայացնել սովորողների նախագծային աշխատանքների թեմաները և դրանց պլանները.	օգոստոս	մասնախմբի անդամներ
	1.**«Իմ ֆիզիկական պարամետրերը»** 7-րդ դասարան	1-ին կիսամյակ	**Ն. Պետրոսյան**
	1.**«Լոռու նարզի դեղաբույսեր»** 7-րդ դասարան	2-րդ կիսամյակ	**Ա. Գրիգորյան**
	1.**«ԳՄՕ պարունակող լուծույթի ազդեցությունը բույսի աճի վրա»** 7-րդ դասարան	2-րդ կիսամյակ	**Ա. Գրիգորյան**
13.	Համագործակցելով դպրոցի բազմամասնագիտական թիմի հետ, դիտարկել ԿԱՊԿ սովորողների կարիքները, քննարկել դրանք և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայացանկ, որի համաձայն նրանց հետ բնագիտական առարկաներից պիտի կազմակերպվեն աշխատանքները:	սեպտեմբեր	մասնախմբի անդամներ, ՄՀԱ թիմ

14.	Օժանդակել դասավանդող ուսուցիչներին՝ կազմել ԱՈՒՊ-ներ ըստ հաստատված առարկայացանկի, պլանավորելով աշխատանքները դպրոցի ԿԱՊԿ սովորողների հետ: Հիմք ընդունել պետական առարկայական չափորոշչային պահանջների երեխայի կարիքին համապատասխան մակարդակը:	սեպտեմբեր	մասնախմբի ղեկավար, ՄՀԱ թիմ
15.	Կրթությունն ուղղելով սովորողի ինքնուրույն մտածողության, հետազոտական և վերլուծական մտքի զարգացմանը, քննարկել սովորողին տրվող առաջադրանքների ձևեր և մեթոդներ: Նպաստել, որ ուսումնական պրոցեսն ապահովվի դրանց կազմակերպման համար անհրաժեշտ կրթական նյութերով, որոնք կխթանեն սովորողների ընդհանուր զարգացմանը, ինքնուրույն սովորելու հմտությունների և տեղեկատվության զանազան ձևերից օգտվելու հմտությունների ձեռքբերմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ
16.	Առաջնորդվելով նոր ժամանակների մարտահրավերներով, կարևորել գործնական և փորձարարական աշխատանքները սովորողների բնագիտական մտածողության ձևավորմանն գործում: Մեծ կարևորություն և ուշադրություն տալ դրանց բնագիտական առարկաների դասերին, սարքերի պակասի դեպքում օգտվել ՏՀՏ միջոցներից:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ
17.	Հաճախակի կազմակերպել մեթոդական քննարկումներ, որոնց ընթացքում պարզաբանել դասի նպատակի, խնդիրների և վերջնարդյունքի բացահայտման, դրանց հստակ, պետական չափորոշիչներին համապատասխան ձևակերպման, դասի կառուցվածքի, դրա տարբեր փուլերի սահուն անցումների շուրջ: Քննարկել դասերի ընթացքում ուսուցանվող նյութերի ծավալի, հագեցվածության, միջառարկայական կապերի ամրապնդման, նպատակահարմարության և կրթության որակի բարձրացմանն ուղղված կարևոր հարցեր:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
18.	Մշտապես մասնակցել ԿԳՄՄՆ, նաև տարբեր կազմա-կերպությունների կողմից հաճախակի կազմակերպվող դասընթացների, սեմինարների, զբաղվել ինքնակրթությամբ, տեղեկանալ, իրազեկվել և տիրապետել համապատասխան առարկաների դասավանդմանն ուղղված փոփոխություններին, գիտության ու տեխնիկայի առաջընթացին, մանկավարժության և բնագիտության բնագավառում նորագույն նվաճումներին ու ձեռքբերումներին: Հաճախակի քննարկել մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
19.	Մոտիվացնել մասնախմբի ուսուցիչներին, նպաստել նրանց մասնագիտական կարողությունների աճին: Աջակցել նրանց որակավորման բարձրացման, կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի ձեռքբերման գործում:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար

20.	Իրականացնել ուսուցիչների փոխօգնություն աշխատանքում առկա դժվարությունների հաղթահարման նպատակով՝ կազմակերպել միասնական քննարկումներ բնագիտական առարկայական մեթոդական միավորման կազմում ընդգրկված բոլոր առարկաներից դասերի անցկացման սկզբունքների վերաբերյալ, օգնել հաղթահարել հնարավոր դժվարությունները:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
21.	Խթանել ուսուցիչների ստեղծագործական աշխատանքը, տանել մեթոդական աշխատանք սկսնակ ուսուցիչների հետ, կիսվել առաջավոր փորձով, ստեղծել նպաստավոր պայմաններ նրանց ինքնակրթության համար:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
22.	Օժանդակել և մասնակցել բոլոր համադպրոցական և նաև այլ բնույթի տարատեսակ առարկայական միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների,ստուգումների անցկացմանը: Նախապատրաստել և անցկացնել բնագիտական առարկաների օլիմպիադայի դպրոցական փուլը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
23.	Հայտնաբերել բնագիտական առարկաներով հետաքրքրված աշակերտներին և ուղղորդված աշխատանք կազմակերպել նրանց հետ: Օգնել, որ կարողանան խորացնել գիտելիքները, մասնակցել ինչպես ՀՀ ԿԳՄՍՆ կազմակերպած, այնպես էլ այլ առարկայական օլիմպիադաների, մրցույթների ու խաղերի:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
24.	Կազմակերպել փոխօգնություն sovorir.am, www.armedu.am, www.aniedu.am, www.lib.armedu.am և այլ կայքէջերից օգտվելու նպատակով: Օգնել ուսուցիչներին ձեռք բերել դասն ավելի արդյունավետ և պատկերավոր դարձնելու, առարկայի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու, աշակերտների ինքնատիպ մտածողությունը զարգացնելու, օնլայն փորձեր կատարելու նպատակով ՏՀՏ կիրառմամբ դասերի կազմակերպման լայն հնարավորություններ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ
25.	Ակտիվորեն դրսևորվել զանազան կրթական հարթակներում (Etwinning-plus, Google Classroom և Microsoft Teams), հաղորդակցվել, համագործակցել, մասնակցել տարբեր նախագծերի մշակմանը, դառնալով ամենահետաքրքիր կրթական համայնքի մի մասը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
26.	Մշտապես նպաստել դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացին՝ նախապես պլանավորել անելիքներն ամսվա կտրվածքով, ներկայացնել նախատեսած տեսադասերի (յուրաքանչյուր դասարանում ամսվա կտրվածքով նվազագույն 1դասաժամ) ժամանակացույց համագործակցելով օպերատորի հետ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
27.	Անցկացնել նպատակային պլանավորած (ամսվա կտրվածքով 5-6 դասալսում, նաև ըստ անհրաժեշտության), դասալսումներ մասնախմբի նախագահի կողմից, քննարկել դրանք:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար

28.	Մասնախմբի բոլոր ուսուցիչների կողմից փորձի փոխանակման և հարստացման նպատակով հաճախակի(ամսվա կտրվածքով 2-3 դասալսում, նաև ըստ անհրաժեշտության), կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ
29.	Արդի բնապահպանական խնդիրների պարզաբանման և միջառարկայական կապերի բացահայտման նպատակով կազմակերպել ինտեգրված դաս ֆիզիկա, կենսաբանություն և ՆԶՊ առարկաներից.**«Մարդու օրգանիզմի վրա ռադիոակտիվ ճառագայթման ազդեցությունը: Ատոմային էներգետիկան և բնապահպանական խնդիրները»:**	**մայիս**	**Ն. Պետրոսյան Ա. Գրիգորյան Յ. Ղազարյան**
30.	Առաջավոր փորձի ներկայացման և դասավանդման մեթոդների կատարելագործման նպատակով անցկացնել նորարարական դասեր: Քննարկելով դրանք, նպաստել ուսուցչի աշխատանքի արդյունավետության և դպրոցում կրթության որակի բարձրացմանը.		
	1.Դաս կենսաբանությունից. **«Արյան խումբ: Ռեզուս գործոն: Արյան փոխներարկում»**	**27-30.11-8^բ**	**Ա. Գրիգորյան**
	2.Դաս աշխարհագրությունից. **«Աշխարհի բնական ռեսուրսների հիմնական խմբերը, դրանց տեղաբաշխումը»**	**26-29. 02-7^ա**	**Շ. Ավագյան**
	3.Դաս ՆԶՊ-ից. **«Կողմնորոշում տեղանքում առանց քարտեզի: Հորիզոնի կողմերի որոշումը կողմնացույցով և այլ կողմնորոշիչներով:**	**18-22.03-8^բ**	**Յ.Ղազարյան**
	4.Դաս ֆիզիկայից. **«Մթնոլորտային ճնշում»**	**10-16.04-7^բ**	**Ն.Պետրոսյան**
31.	Իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակություն. դասղեկների հետ կազմակերպել 9-րդ դասարանցիների այց ազատամարտիկների պանթեոն, հարգանքի տուրք մատուցելու 44 օրյա պատերազմի հերոսներին:	**27.09.2023թ.**	**Յ. Ղազարյան**
32.	Սովորողներին պարբերաբար ծանոթացնել համաշխարհային և տարածաշրջանային արդի բնապահպանական խնդիրներին, աղետներին և դրանց ռիսկերին.		**Յ. Ղազարյան**
	1.Նախաձեռնել ԱԻ տասնօրյակ՝ համագործակցելով դասղեկների հետ, անցկացնել և տեսական և գործնական բնույթի թեմատիկ դասղեկի ժամեր, սովորողներին ներկայացնելով պաշտպանության վարքականոններ:	**04-15.12. 2023թ.**	
	2.Կազմակերպել դպրոցի անձնակազմի տարահանումը ԱԻՆ-2 հրշեջ փրկարարական ջոկատի աջակցությամբ:	**01.03 2024թ.**	
33.	Իրականացնել տարբեր միջոցառումներ՝ բնապահպանական, անձնական հիգիենայի, առողջ ապրելակերպի և սպորտային թեմաներով.		
	1.Միջդասարանային սպորտլանդիա 6-րդ դասարանների միջև. «Ուժեղների խաղ»	**հոկտեմբեր 2023թ.**	**Ա. Քառյան Մ. Գալոյան**
	2.Վիկտորինա. «Առողջ և ուժեղ»	**փետրվար 2024թ.**	**Ա. Քառյան Մ. Գալոյան**
	3.Միասնական ստենդի ձևավորում	**ապրիլ 2024թ.**	**մասնախմբի ուսուցիչներ**

	4.Ինտելեկտուալ խաղ. «Գիտելիքը հզոր ուժ է»	**մարտ, 2024թ.**	**Ն. Պետրոսյան**
34.	Իրականացնել բնապահպանական դաստիարակություն նաև արտադասարանական միջոցառումներում.		
	1.Այցելություն Մարգահովիտի Բնապահպանական կենտրոն ԳՄՕ շրջանակներում	**ըստ պայմանավ.**	**Ա. Գրիգորյան**
	2.Ուսուցողական էքսկուրսիա տարածքային հիդրոօդերևութաբանական կայան	**22-26.04. 2024թ.**	**Ն. Պետրոսյան**
	3.Բնապահպանական էքսկուրսիա դենդրոպարկ	**27-30.05. 2024թ.**	**Ն. Պետրոսյան**
	4.էքսկուրսիա Վանաձորի բուսաբանական այգի	**27-30.05. 2024թ.**	**Ա. Գրիգորյան Ն. Պետրոսյան**
35.	Անդրադառնալ ջրի, օդի, մոլորակի, անտառի և այլ բնապահպանական բնույթի օրերին, նշանավոր մարդկանց տարելիցներին, որ նշում են աշխարհում: Ներկայացնել ժամանակակից աշխարհում գլոբալիզացիայի Կայուն զարգացման հեռանկարները:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ
36.	Կարևորելով ինքնուրույն աշխատանքների դերը սովորողի մտածողության և վերլուծական մտքի զարգացման գործում, քննարկել դրանց հանձնարարման առանձնահատկությունները:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
37.	Կազմակերպել 7-րդ դասարաններում իրականացված ուսումնական նախագծերի արդյունքների վերլուծություն	նախագծի ավարտին	մասնախմբի անդամներ
38.	Յուրաքանչյուր մասնախմբի նիստի ընթացքում ներկայացնել մեկական մանկավարժական ընթերցում, զեկույց, որը միտված կլինի ուսուցչի աշխատանքի կատարելագործմանը.		
	1. «Ֆիզկուլտուրայի դասավանդման նպատակն ու խնդիրները, սովորողներին ներկայացվող պահանջներն ըստ կրթական աստիճանների»	նոյեմբեր	Ա. Քառյան
	2.«Քիմիայի դերը բնության մեջ և մարդու կյանքում»	դեկտեմբեր	Ն. Հարությունյան
	3.«Նախագծային աշխատանքի կազմակերպումը կենսաբանություն առարկայից»	հունվար	Ա. Գրիգորյան
	4. «Ֆիզիկայի դասավանդման արդյունավետության բարձրացումը ՏՀՏ գործիքների կիրառմամբ»	փետրվար	Ն.Պետրոսյան
	5. «44 օրյա պատերազմի դասերը»	մարտ	Յ .Ղազարյան
	6. «Աշխարհի գնչուները»	ապրիլ	Շ. Ավագյան
	7. «Ֆիզիկական կուլտուրան պատանիների զինվորական ծառայության նախապատրաստության միջոց»	մայիս	Մ. Գալոյան
39.	Համագործակցել դպրոցի մյուս առարկայական մեթոդական միավորումների հետ, այլ առարկաներից միջառարկայական կապերի ապահովման նպատակով:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ

40.	Շփումներ ստեղծել այլ դպրոցների միջև, իրականացնել փորձի փոխանակում, նպաստել ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և ուսման որակի բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
41.	Նախաձեռնել խորհրդատվություններ և քննարկումներ հեռավար դասերի անցկացման հմտությունների հարստացման, փորձի փոխանակման նպատակով:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
42.	Օժանդակել տնօրենությանը դպրոցում զանազան ստուգումներ կազմակերպելու, առարկաների դրվածք ուսումնասիրելու, նաև դասալսումների գործում: Կատարել դրանց արդյունքների քննարկում և վերլուծություն:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
43.	Անցկացնել դպրոցում բնագիտական առարկաներից թեմատիկ և գործնական աշխատանքների անցկացման, դրանց տետրերի վիճակի ուսումնասիրություն.		ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
	1.Աշխարհագրություն, Ֆիզիկա	**հունվար**	
	2.Ես և շրջակա աշխարհը, Քիմիա	**փետրվար**	
	3.Բնություն-5, Բնագիտություն-6, Կենսաբանություն	**մարտ**	
44.	Ստուգել ուսումնական ծրագրային նյութի կատարողականի վիճակը՝ առարկայի պարտադիր ժամաքանակի, ուսումնական նյութի դասավանդման, տարբեր տեսակի աշխատանքների կատարման և գնահատման համապատասխանությունը հաստատված թեմատիկ պլաններին: Հաշվետվություններով հանդես գալ մանկավարժական խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության ապահովել հնարավոր բացթողումների լրացումը:	4–8.12.23թ. 6–10.05.24թ.	մասնախմբի ղեկավար, անդամներ
45.	Պարբերաբար օժանդակել էլեկտրոնային մատյանների լրացումների վերահսկմանը. - թեմաների գրանցումն ըստ թեմատիկ պլանի, - տնային աշխատանքների գրանցումը բոլոր դասերի համար, - սովորողների ամենօրյա գնահատումը, - թեմատիկ և գործնական աշխատանքների գնահատումը եռօրյա ժամկետում:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
46.	Կատարել առաջադիմության արդյունքների կիսամյակային, տարեկան և քննական վերլուծություններ: Ներկայացնել հաշվետվություն մասնախմբի և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ:	դեկտեմբեր 2023թ. հունիս 2024թ.	մասնախմբի ղեկավար
47.	Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին քննարկել ուսուցիչների կողմից ներկայացված կատարած աշխատանքների հաշվետվությունները:	դեկտեմբեր 2023թ. հունիս 2024թ.	մասնախմբի ուսուցիչներ

48.	Համագործակցելով դպրոցի տնօրենության հետ, ավարտական դասարաններում կազմակերպել բնագիտական առարկաներից նախաքննական վիճակի ստուգում: Կատարել վերլուծություն, աշխատել ժամանակին վերացնել բացթողումները:	ըստ անհրաժեշ.	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
49.	Վերլուծել նոր, փորձարկված դասագրքերը, քննարկել դրանցում համապատասխանությունը ծրագրային և չափորոշչային դրույթներին: Ներկայացնել փորձագիտական կարծիք:	ըստ անհրաժ.	մասնախմբի ղեկավար, անդամներ
50.	Քննարկել 2023-2024 ուստարվա հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողի փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգը, քննությունների անցկացման աշխատակարգն ու ժամանակացույցը:	ապրիլ մայիս 2024թ.	մասնախմբի ղեկավար, անդամներ
51.	Կազմակերպել ուսումնական տարվա ընթացքում 120-200 դասաժամ բացակայած աշակերտների առաջադիմության ամփոփումը բնագիտական առարկաներից՝ յուրաքանչյուր առարկայից կազմել, քննարկել և հաստատման ներկայացնել ստուգողական աշխատանքի տարբերակներ՝ ընդգրկելով սովորողի բացակայած ժամանակահատվածի ուսումնասիրված նյութը:	մայիս	մասնախմբի ղեկավար, անդամներ
52.	Ըստ գործող կարգի՝ առաջնորդվելով ժամանակացույցով, նպատակային կազմակերպել ավարտական քննություններին նախապատրաստող խորհրդատվությունները բնագիտական առարկաներից:	մայիս-հունիս 2024թ.	քննական առարկաների ուսուցիչներ
53.	Քննարկել չառաջադիմող և բնագիտական առարկաներից վերաքննություն ունեցող սովորողների ամառային առաջադրանքները, կազմակերպել աշխատանք նրանց հետ:	հունիս 2024թ.	մասնախմբի ղեկավար, անդամներ
54.	Կատարել 2024-2025 ուստարվա նախնական ժամաբաշխում և առաջարկություն ներկայացնել ուսպլանով նախատեսված պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակների վերաբերյալ:	հունիս 2024թ.	մասնախմբի ղեկավար, անդամներ
55.	Օժանդակել բնագիտական առարկաների վերաքննությունների կազմակերպմանը:	օգոստոս 2024թ.	մասնախմբի ղեկավար, անդամներ